

ՁԱՅՆԱԿԱՆ ԵՒ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

ՈՒՐՈՒԱԳԻԾ

ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒ

			ա	ան	ե			է	ը	ի	ո			ու	այ	ոյ	իւ	բ	պ	փ	հ
					Բառին սկիզբը	Մէջը	Վերջը				Բառին սկիզբը	Մէջը	Վերջը								
Ուլ ճ ի լ ո	{	Երեսան	ա	ան	յէ, է	է	է	է	ը	ի	վօ	օ	օ	ու	է	ի	ի	բ'	պ	փ	հ
		Թիմիս	ա	ան	յի	է	ի	—	ը	ի	վու	—	ու	ու	է	ու	ու	բ	պ	փ	հ
		Ղարաբաղ (Շամախի).	ա, ա, է	ան	յէ	է, ըէ, ի	է, ըէ, ի	է, ըէ, ի	ը, ը	ի, է, ըէ	վըէ	օ, էօ, ու	օ, էօ, ու	ու, օ, իւ, էօ	է	իւ	իւ	պ	պ	փ	հ
		Ջուղա	ա	ան	—	է	է	է	ը	—	—	—	—	—	է	—	ու	բ	պ	փ	իւ
		Ագուլիս	ա, ա, օ (է, էօ, այ, իւ)	ուն	ի	ի, է, ա, ա	ի, է, ա, ա	է, էյ, ի, ա, այ	ը	ի, այ, ա, ա	ու, է	ու, իւ, է ա, ա	ու, իւ, է ա, ա	ու, իւ, է, օ	այ, ա	իւ	իւ	բ	պ	փ	հ
Ն խ բ	{	Կարին	ա	ան	յէ, է	է	և	է	ը	ի	օ	օ	ն	ու	ա	ու	ու	բ'	բ	փ	հ
		Մուշ	ա	ան	յև, է	է	և	է	ը	ի	վօ, օ	օ	ն	ու	է	ու	ու	բ'	պ	փ	հ, իւ
		Վան	ա, ա	ան	յև, է	և է, ի	և	է	ը	ի, է	վո	ա, օ, ու	ա, էօ, ն, ու	ու, իւ	է	ա, ն, ու	ու, իւ	պ	պ	փ	իւ
		Տիգրանակերտ	ա	ան	է	է, ի	ի	—	ը, է	—	—	—	ու	ն	է	—	—	բ'	պ	փ	հ
		Խարբերդ	ա	ան	յէ, է	է	է	է	ը	ի	օ	օ	օ	ու	ա	օ	ի	բ'	բ	փ	հ
		Շապին-Պարահիսար.	ա	ան	—	—	—	—	—	—	—	էօ	էօ	—	—	—	—	բ'	բ	փ	հ
		Տապիզուն	ա	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	բ	բ	փ	հ
		Համեղն	ա	օն	է	է	է	է	ը	ի	օ	օ	օ, իւ	ու	է	ու	ու	բ	բ	փ	հ
		Մալաթիա	ա	ան	ի	ի	ա, ի	—	—	—	—	—	—	օ	է, ա	օ	ի, օ	փ	բ	փ	հ
		Զէյքուն	օ, ա, ա	օն	է, ի	է, ի	է, ի	է	ը	ի, է, ը	օ, ու, իւ	օ, ու, իւ	օ, ու, իւ	օ, իւ	ա	իւ, ի	ի, ը, է	բ'	բ	փ	հ
Կ լ ճ ի լ ո	{	Մարաշ	»	օն	է, ի	է, ի	է, ի	է	—	ա	—	—	—	—	—	—	—	բ	բ	փ	հ
		Սիրիա	ու	ուն	յէ	է	ի	—	ա	էյ	—	օ	—	ու	—	—	—	բ	բ	փ	հ
		Արաքիս	ա, ա	ան	է	է	է	է	ը	ի	օ	օ	օ	ու	ա	ու	ու	բ'	բ	փ	հ
		Ակն	ա	օն	է	է	է	է	ը	ի	էօ	էօ	էօ	իւ	ա	ու	ու	բ'	բ	փ	հ
		Սեբասիա	ա	ան	—	—	և	է	ը	ի	—	—	ն	ու	ա	ու	ու	բ'	բ	փ	հ
		Եւդոկիա	ա	ան	յէ	է	է	է	ը	ի	օ	ուէ	ուէ	ու	ա	ու	ու	բ	բ	փ	հ
		Ասլամբէգ	ա, ա	ան, էօն, օն, էն,	է	է՝	է՝	է՝	ը	ի	էօ	էօ	էօ	իւ	ա, է	իւ	իւ	բ	բ	փ	հ
		Պօլիս	ա	ան	է	է	է	է	ը	ի	օ	օ	օ	ու	ա	ու	ու	բ	բ	փ	հ
		Ռոստոք	ա	ան	—	է	է	է	ը	ի	—	օ	օ	—	ա	—	—	փ	բ	փ	հ
		Նոր-Նախիջևան	ա	ան	յէ	է	է	է	ը	ի	օ	օ	օ	ու	ա	ու	ու	բ	բ	փ	հ
Ել ճ ի լ ո	{	Սուչավա	ա	ան	յէ	է	և	է	ը	ի, իը	օ	օ	օ	ու	ա	ու	ու	բ'	բ	փ	հ
		Մարաղա	ա, ա	ան	յէ, է	է, ըէ, ի	է, ըէ, ի	է	ը	ի, ըյ, ը	վըյ	օ, էօ, ըյ, ույ, ուէ	ու, ույ, իւ, ու	է	իւ, ույ	իւ, ի	պ	պ	փ	իւ	
		Արդուին	ա	ան	է	է	է	է	ը	ի	—	—	—	—	է	—	—	բ	պ	փ	հ

Ա. Ում-ի ճիւղ.

1. Երեւանի բարբառ

Կը պարունակէ այն ձայները՝ որոնք յատուկ են հին հայերէնին. ասոնց վրայ բնական ձայնաշրջութեամբ աւելցուցած է Ֆ ձայնը, որ կը ծագի հ-էն ո-ի քով. ինչ. Ֆօփ < հոգի, Ֆօղ < հող:

Ձայնական փոփոխութեանց մէջ նկատելի են. այ > ե, բայց բառավերջին ա. ոյ > ի. իւ > ի. ե բառասկզբին կը դառնայ է, նոյնպէս բառի մէջ. ասոր հակառակ ո բառասկզբին կըլլայ վօ, բառի մէջ օ: Բաղաձայններու երեք խումբերը փոփոխուած են հոս հետեւեալ ձևով.

բ	պ	փ	>	բ'	պ	փ
դ	կ	ք	>	դ'	կ	ք
դ	տ	թ	>	դ'	տ	թ
ձ	ծ	ց	>	ձ'	ծ	ց
ջ	ճ	չ	>	ջ'	ճ	չ

Միւս բաղաձայններուն մէջ նկատելի են իբրև մասնակի դէպքեր՝ իւ > հ, ր ինկած շող ձայներու քով, դ ինկած բառավերջին, սն դարձած նն:

Քերականութեան կողմէ բարբառս ամենէն հաւատարիմն է Ում-ի ճիւղին մէջ, կը պահէ գրաբառի վեց հոլոքները, որոնց վրայ աւելցուցած է ներգոյականը, ում մասնիկով: Սեռականը կը զանազանէ տրականէն անով որ առաջինը յօդ չ'առնէր բնաւ, իսկ տրականը ունի յօդ: Հայցականի ձևը պահուած է միայն անորոշ կամ անշունչ բառերու մէջ, ուրիշ տեղեր տրականի ձևով է: Բացառականի մասնիկն է ից:

Բային մէջ սահմանականի բոլուն կը կազմուի ում յանգով. սիրում եմ. սիրում ի. կատ. կը մնայ անփոփոխ. սիրեցի. բուն ապառնին կը կազմուի կը մասնիկով. կը սիրեմ. անց. ապ. կը սիրի. պարտաւորական ձև է պսի սիրեմ. պսի սիրի, կամ շրջուած՝ սի'րիլ պսիւմ, սի'րիլ պսի: Միավանկ բայերուն բունը կը յանգի իս. լալիս, տալիս, գ'ալիս:

Բայագիտի ենթաբարբառը վերջին ձևերը կը կազմէ նոյնպէս ում յանգում, լալում, տալում, գ'ալում. էականը կը կրկնէ

բային քով. յիս հմ ուզում հմ, չե՞ս բ'երում հա: և Ձայնը կը դառնայ ի թէ այս և թէ Թաւրիդի հնթաբարբառին մէջ:

2. Տփղիսի բարբառ

Կը պահէ գրաբարի ձայները, որոնց վրայ աւելցուցած է վրացերէնէ փոխառութեամբ ղ' (խիստ կոկորդային ղ). բաղաձայններու երեք խումբերը կը մնան բոլորովին անփոփոխ. ձայնաւորներու փոփոխութեանց մէջ նկատելի են բառասկզբի $h > յ, n > լու$. վերջի ցանկին մէջ $h > ի, n > ու, ոյ, > ու, իւ > ու$: Հոլովման մէջ նկատելի է բացառականը, որ կը կազմուի մէկ մասնիկով. մնացեալը նոյն է Երևանի հետ. այսպէս հասկնալ նաև բայը, ուր նկատելի տարբերութիւններն են. էական բային ձևը ի-ով. սի'րում իմ, սի'րում իս և այլն. պարտաւորականը պիտի սիրիմ կամ պիտիմ սիրի. ապառնիի մասնիկը կու փիւ. կը-ի. կու սիրիմ և այլն. Շեշտը թէ այս և թէ Երևանի բարբառին մէջ վերջընթեր վանկին վրայ է:

3. Ղառաբաղի բարբառ

Ձայնական դրութիւնը շատ հարուստ է. կը պարունակէ 11 ձայնաւոր (ա, տ, է, ը, ը', ըէ, ի, օ, ու, էօ, իւ), 3 երկբարբառ (էյ, օյ, ուա), 33 բաղաձայն (բ, պ, փ; գ, կ, ք; գ', կ', ք', դ, տ, թ; ձ, ծ, ց; ջ, ճ, չ; ղ, ժ, ս, շ; խ, զ, հ, հ'; լ, մ, ն, բ, ու, վ, յ): Շեշտը կը գտնուի վերջընթեր վանկին վրայ. շեշտէն առաջ գտնուած ձայնաւորները կ'իյնան կամ բ-ի կը վերածուին. Ձայնական փոփոխութեանց մէջ նկատելի են $u > ա, m > ե; h > ք, ը, յ$ (բառին սկիզբը), $ի > ք, ը, ի; ի > ի, ք, ը; n > օ, հօ, ու, ը$ (վ ձայնէն յետոյ), վրէ (բառին սկիզբը); $ու > ու$ (ա ձայնաւորին քով), վ (ուրիշ ձայնաւորներու քով), առանձին կամ բաղաձայնի քով ու, օ, իւ, հօ. Երկբարբառներէն $այ > ք; իւ > իւ$ կամ իվ; $ոյ > իւ; ով > ավ$: Բաղաձայններուն մէջ թըրթոուն ձայները դարձած են խուլ, պահուած են անփոփոխ միայն ռնգականէ յետոյ, իսկ բ-է յետոյ դարձած են թաւ. բերան $>$ պե'րան, բամբակ $>$ պե'մբակ, որք $>$ վրեքփ: Գ. ձայնը կը'լլայ փ' կ', մինչդեռ կ, ֆ կը մնան. բառին սկիզբը հո- կը դառնայ վրէ, շատ բառերու սկիզբը կը դրուի աւելորդ և շունչը. գրաբարի և յանդերը՝ որ ամեն տեղ ջնջուած են, հոս կը պահուին մօ'կնը, մօ'ննը,

մա'ննը են. սն կը դառնայ նն. Բարբառս զուրկ է Ֆ ձայնէն և օտար ֆ ձայնը կը դարձնէ փ:

Քերականական ձևերուն մէջ հետաքրքիր են սեռ. տր. ե, բաց. ա, ան, գործ. ալ, յք. բեք, նք, սեռ. երի, ների, բաց-ե'րան, նե'րան, գործ. ե'րալ, նե'րալ: Անորոշ դերբայը կը հոլովի ի ձևով. խօսե'լի, ասե'լի: Ներկայի բունն է ում, բմ, ամ, իս, էս, աս. ինչ. սիրում բմ, սիրամ բմ, սիրաս բմ են: Ապառնիին ձէն է ական. պիրիա'կան բմ, խուսըական բմ, են: Անցեալ դերբայը կը յանգի ալ, սիրալ բմ, պի'րալ բ'ս:

4. Շամախիի բարբառ

Ձայնական կազմութեամբ բոլորովին նոյն կրնայ համարուել Ղարաբաղի բարբառին հետ. կը պահսի միայն ըէ ձայնը: Քերականութիւնը նոյնպէս շատ կողմերով նոյն է. տարբերութիւններն են գործ. օլ (փիւ. ալ). ապառնիին մէջ իւ մասնիկը փոխանակ ական. Շմ. սիրելիւ ամ=Ղբբ. սիրել'կան բմ: Էական բայը հոս ունի ամբողջապէս ա ձայնաւորը. ամ, սա, ա, անք, աք, ան:

5. Աստախանի բարբառ

Քիչ ծանօթացուած բարբառ մէ, որ կը բռնէ Ղարաբաղի և Երևանի բարբառներուն մէջտեղը. ձայնաւորներու փոփոխութեամբ նման է Երևանին, բաղաձայններու փոփոխութեամբ Ղարաբաղին. հոս ալ թրթուռն ձայները կը դառնան խուլ: Բացառականը—Ղարաբաղի նման կը կազմուի ա, ան յանգով. ներգ. բմ. անորոշ դերբայներուն սեռականն է ի. անկատարի և կատարեալի առաջին եզակի դէմքը կ'ստանայ մ. կը վառեիմ, խաղացիմ են:

6. Զուղայի բարբառ

Հին Զուղայի գաղթականներու շնորհիւ տարածուած է ամբողջ արևելեան և հարաւային Պարսկաստանի մէջ: Ձայնական դրութեամբ նման է Թաւրիզի ենթաբարբառին. և կը դառնայ իւ. բառերու սկիզբը շատ տեղ կ'աւելնայ աւելորդ և ձայնը. բառին սկիզբը իւ կը դառնայ ու. ոչ բացասականը կ'ըլլայ մօչ, մօնչ: Քերականութեան մէջ նկատենք որ սեռ—տր. հոլովը նման է Ղբբ. (ե) կամ Երևանին (ի). բացառականը կը յանգի ե, բայց ու յանգող բառերը կ'առնեն ից, ուց: Յոգնակիի յանգերն են. ուղ. եք, նեք. սեռ. տր. երի, ների, երօց. բաց. երե, երօցե. գործ. երօլ:

նեռով. ներգ. եռում, նեռում: Երբեմն յոգնակիի համար կը դրուի եֆ, աճի, երանի, նեռանի, արեմ: Բայի մէջ էականը ամբողջապէս ա ձայնաւորն ունի. աւ, աւ, ա, աւֆ, աֆ, աւ. ներկայի բունը կը կազմուի ման մասնիկով. գնաման աւ, տնաման աւ են:

7. Ազուլիսի բարբառ

Հայոց 31 բարբառներուն մէջ ամենէն աւելի փոփոխուածն է, այնքան որ իբրեւ առանձին լեզու համարուելով կոչուի է գոկերեմ: Զայնական զրութեան մէջ զբարբառի վրայ աւելցած են ո, իւ, եօ, գ', կ', Բ: Կը նկատենք հետեւեալ ձայնական փոփոխութիւնները ա > ա, ո, օ (շեշտի տակ), ե, եօ, յեօ, ալ, ու (սեղանի քով), իւ; ե > ի, ե, ո, ա, եօ; ե > ե, էլ, ի, ալ, ա; ի > ի, ալ, էի, ո, ա, ու, ուլ; ո > ու, իւ, ե, ո, ա; ու > ու, իւ, էլ, ե, օ; ալ > ալ, ա, իւ, ե, ի; իւ > իւ, իւլ, ալ, ի; աւ > օ, ալ, ու, օլ; ուլ > օլ, ալ, ուլ; էւ > ուլ, իւլ; ոլ > իւ: Բաղաձայնները անփոփոխ պահած իրենց եռաստիճան նրբութիւնները, նոյն իսկ Է ձայնէն յետոյ: Միայն երբեմն իւ կը դառնայ ն: Շեշտը վերջնութեւր վանկին վրայ ըլլալով՝ Զարաբաղի նման շեշտէն առաջ գտնուած բոլոր ձայնաւորները կ'իյնան:

Հոլովման մէջ նկատելի են. սեռ. ի (ընդհանուր մասնիկ), ա (յատուկ անուանց համար), եօ (շեշտի տակ), բաց. ից. գործ. ալ (անշեշտ), եօլ (շեշտեալ), ներգ. աւ (անշեշտ), ում (շեշտեալ), Յոգ. մասնիկն է ար (միավանկներու համար), ֆ (ձայնաւորով վերջացող բառերու համար), նեռ (մնացեալներուն համար), Յոգ. սեռ.—տր. (ն)երի, բաց. (ն)երից, գործ. (ն)երով, ներգ. (ն)երում: Խոնարհման մէջ մտած են խիստ մեծ փոփոխութիւններ. 4 լծորդութիւնները վերածուած են շ-ի. իլ, օլ. բոլոր ժամանակներուն մէջ ալ յոգնակի առաջին դէմքը ջնջուած է և տեղը դրուած է յոգ. երկրորդ դէմքը. անկատարը ջնջուած է և տեղը դրուած է նոր ձև մը (ներկայի վրայ աւելցած նեկ). կատարեալը ջնջուած և տեղը դրուած է յարակատարը կամ ստորադասականը. ապառին ոչ պիտի մասնիկն ունի և ոչ կը. կը շինուի անորոշը խոնարհելով էական բային հետ: Օր. ներկ. կտրո՛ւմ բւմ, անկ. կտրո՛ւմ բւմ նեկ, կատ. կտրիլ բւմ կամ կտրեմ, ապ. կտրիլ բւմ, անց. ապ. կտրիլ բւմ նեկ: Այս բոլոր փոփոխութիւններով Ազուլիսի բարբառը կը ներկայանայ իբրեւ միջին օղակ մը առաջին և երրորդ ճիւղին, մասնաւորապէս խօսելով Զարաբաղի և Մարաղայի բարբառներուն մէջտեղ:

Բ. Կը-ի ճիւղ.

1. Կարնոյ բարբառ

Դրաբարի ձայներուն վրայ աւելցուցած է m, n (=uo), ե (ie), ֆ: m կը գտնուի թուրք կամ թուրքերէնէ ազդուած քանի մը բառերու մէջ. ե և n կը գտնուին շեշտի տակ միայն և կը յառաջանան գրբ. ե և n ձայներէն. ֆ կը ծագի և ձայնէն (ո-ի քով) կամ ւ ձայնին խուլալովը. հոդ>ֆոդ, հաւասար>հաֆսար: Բաղմավանկ բառերու միջին ա-ը կը կորսուի, ինչպէս և բոլոր կը ճիւղի բարբառներուն մէջ, այ երկբարբառը կ'ըլլայ ա (քաղաքին մէջ), ե (գիւղերուն մէջ). իւ>ու. ոյ>ու. ե բառին սկիզբը կը դառնայ յի (միավանկներու մէջ), ե (բաղմավանկներու մէջ). ո կըլլայ սկիզբը և մէջը օ. շեշտի տակ ո: Բաղաձայններուն մէջ թրթռուններու շարքը դարձած է բ', գ', դ', ձ', ջ', խուլերը դարձած են թրթռուն, իսկ թաւերը կը ֆնան: Սակայն թրթռունները ոնգականէ հոք անփոփոխ պահուած են:

Հոլովը ինչպէս ամբողջ ճիւղին մէջ, Յ է միայն. չունի ներգոյական ուլ, որ յատուկ է առաջին ճիւղին: Հոլովման մէջ հայցականը նրկանի ոճով է. յոգնակիի մէջ կայ նաև ետդան մասնիկ մը, որ կը կցուի ի յանգող բառերուն: Բային մէջ չկայ ուլ բունը՝ ինչպէս և ամբողջ ճիւղին մէջ. հոս սահմանականը կը կազմուի գը մասնիկով, որ կը դրուի բայէն յետոյ, իսկ միավանկներու և ձայնաւորով սկսող բայերուն վրայ կը կրկնուի. սիրեմ գը, սիրեի գը, գեմեմ գը, գու լամ գը:

2. Մեոյ բարբառ

Ձայնաւորներու կողմէ հարուստ չէ. m, իւ, եօ ձայները կը պակսին հոս. բայց կան ե և n շեշտի տակ. առոնք բառի մէջ կըլլան ե, օ, բառին սկիզբը յի, վօ. ու>ու, այ>ե, ոյ և իւ>ու: Ընդհակառակը շատ հարուստ է բաղաձայնը, որ հոս ունի չորս աստիճան.

բ'	բ	պ	փ
գ'	գ	կ	ք
դ'	դ	տ	թ
ձ'	ձ	ճ	ջ
ջ'	ջ	ճ	ջ

Առաջին շարքը կը ծագի գրաբարի Բ, Գ, Դ, Ա, Չ ձայներէն, որոնք բառի մէջ կ'ըլլան պարզ թրթռուն կամ խուլ. իսկ խուլերը և թաւերը կը մնան անփոփոխ: Հ ձայնը բարբառիս հարաւային մասին մէջ կը մնայ հ, իսկ հիւսիսը խ, Կայ և նոր տեսակ մը թրթռուն և, որ կը նշանակենք ծ, ասիկա կը համապատասխանէ գրաբարի Ե-ին և կը դրուի միայն բառին սկիզբը:

Քերականութեան մէջ հետաքրքիր են Գ հայցականի մասնիկը, ստացականներու քով յօդի բացակայութիւնը (օր. մըր տուն. մըր հաց) նախադրութեանց իբրև նախդիր գործածութիւնը (մըր մըր տան, վըր մըր գ'ըլխուն մըր բնօր), մինչդեռ միւս բարբառները, նաև գրական լեզուն, վերածած են վերջադրութեան:

Սոնարհման ժամանակ բային ե և հ ածանցատուերը կըլլան ի. անկատարին եզ. առաջին դէմքը ջնջուած և փոխանակուած է յոգնակիով. յես կուզիմք, մընք կուզինք: Անցողականը կը կազմուի ցու մասնիկով. կը հարցում, Դերբայի մասնիկն է եր, բայց իբրև ածական գործածելով ուկ, մեռուկ, գ'րուկ և այլն:

3. Վանի բարբառ

Կը պարունակէ հետեւեալ ձայները. ձայնաւորներ՝ ա, ո, է, ը, ի, օ, էօ, ղ (բաց եօ), ու. իւ. Երկբարբառներ ե, ո; բաղաձայններ բ, պ, փ; գ, կ, ք; ց, կ', ք', գ, տ, թ; ձ, ծ, ց; շ, ճ, չ; յ, բ, ո, լ, վ, մ, ն; չ, ժ, շ, ս; խ, ղ, հ, հ', ֆ: Ա ձայնը կը հնչուի շատ խուլ, իբրև օ. ուրիշ տեղ կը դառնայ ո. ե բառին սկիզբը կըլլայ յե, հ, բառի մէջ ե, հ, ի, բառին վերջին վանկին մէջ ե; ե> հ; ի> ի, հ; ո բառին սկիզբը վո, մէջը ո, օ, ու, շեշտի տակ ո, ղ, եօ, ու; ու> ու, իւ, վ, Երկբարբառներէն ալ> հ, ա; իւ> իվ կամ իւ; ոլ> ո, ղ, ու. Բաղաձայններ նման են Ղարաբաղի. Թրթռուն ձայները կը դառնան խուլ. իսկ խուլերը և թաւերը կը մնան. ռնգականէ յետոյ թէ խուլերը և թէ թրթռունները կըլլան թրթռուն: Հ ձայնը կըլլայ խ, ր> ո՝ ս, ք և շչող ձայներու քով. Բաղաձայնէ առաջ կըլլայ հ:

Հոլովումը ում-ի ճիւղին նման է, միայն ներգոյականը կը պակսի. բաց. ից, հայց. անշունչ բառերու մէջ ուղղականի պէս, իսկ շնչաւորներու մէջ տրականին պէս: Յոգնակիի մասնիկն է եր (միավանկներու համար), եեր (բաղաձայնով յանգող բաղմավանկ բառերու համար), հ'սեր՝ ձայնաւորով յանգող բաղմավանկ բառերու համար:

Յոգնակիին մէջ սեռ. տր. և բաց. միևնոյն վերջաւորութիւնն ունին երաց, եհաց, հ'սհաց:

Գոյականներուն վրայ ը յօդ երբեք չի դրուիր։ Այս պարագային բառը կը մնայ անորոշ։

Բայերու խոնարհման մէջ փոփոխութիւններ չկան։

4. Տիգրանակերտի բարբառ

Շատ կը նմանի Մշոյ բարբառին. եղած տարբերութիւնները հետեւեալներն են. ու>օ, ո>ու ; ե>ի : ալ>ե. և ձայնը կը մնայ և։ Հաղզոյի գաւառականը ունի նոր ձայն մը լ (անգլ. w), կը դրուի վ ձայնին տեղ՝ բառասկզբին. ւրէն=վրան։

Յօդը այս բարբառին մէջ ե կը դառնայ, բերանէ, շունէ, տունէ։ Հայցականը կառնէ գ. բացառականը ե, բայց անորոշ դերբայը ուց. յոգնակիի նշանն է նիւ, նիւ եւ դերանուան հայցականն է եսի. ս, դ, և անձնական յօդերուն վրայ կաւելնայ ի. բերանի, գլխի, երեսդի և այլն։ Խոնարհումը նման է Մշոյ։

5. Խարբերդ-Երզնկայի բարբառ

Նը պարունակէ ա, ո, ե, ը, ի, օ, ու ձայնաւորները, իսկ եօ, իւ, ե, ո կը պակսին. դրաբար ոյ կը դառնայ օ. իւ>ի. ե>յե, ե. ո>օ. ալ>ու։ Բաղաձայնները երեք խումբ են. դրաբարի թրթռունները կը դառնան բ՛ գ՛ դ՛ ձ՛։ Խուլները կը դառնան թրթռուն, իսկ թաւերը կը մնան։ Ե և ի ձայններէն յետոյ եկող գ, կ, ֆ ձայնները կը դառնան ի՛, ֆ՛։ Տ կը դառնայ և եթէ ն-ի քով գտնուի, իսկ ս կը ջնջուի ալ և ս ձայններուն քով։ Տէրսիմի գաւառականը ն, ջ, չ կը դարձնէ ծ, ձ, ց։

Հոլովներուն մէջ սեռ. և տրակ. միշտ և բոլորովին նման են իրարու, ինչպէս և ուղ. և հայց. այս բանը յատուկ է կը ճիւղի միւս բոլոր բարբառներուն։ Բային մէջ ե ածանցը կը դառնայ ի ռնգականի քով միայն. երբորդ դէմքին նշանն է ո (գը սիրո). ապառնին կը կազմուի դր մասնիկով։

6. Շապին—Գաղանիսարի բարբառ

Բոլորովին անծանօթ մնացած բարբառ մ'է. կը բռնէ Խարբերդի և Երզնկայի մէջտեղը. ունի երեք խումբ բաղաձայններ, բայց ձայնաւորները նման են Երզնկայի. ո ձայնը կը դառնայ եօ. բայերուն մէջ ե կըլլայ ի. ներկայ և անցեալ ժամանակները ու-

նին երկու ձև. պարզ և շարունակական. վերջինիս մասնիկն է դար (=պլ. կտ). գր բ'երիմ, գր բ'երիմ դար:

7. Տրապիզոնի բարբառ

Շատ անյայտ բարբառ մ'է և շատ անգամ շփոթուած է յաշորդին հետ. ձայնաւորները նոյն են կարնոյ հետ. իսկ բաղաձայնները բոլորովին փոխուած են. հին հայերէնի երեք խումբերուն տեղ կը մնայ երկու խումբ. թրթռուն և թաւ. գրաբարի թրթռուն և խուլ ձայները հտւասաբապէս կը դառնան թրթռուն. թաւերը կը մնան. Զեաքանութեան մէջ չկան նկատելի փոփոխութիւններ. իր գլխաւոր յատկանիշն է եւ մասնիկը, որով կը կազմէ սահմանական ներկայի և անկատարի շարունակական ձևը. գր սիրիմ եւ ալն:

8. Համեւնի բարբառ

Ձայնաւորներն են ա, է, բ, ի, օ, ու, իւ. գրաբարի ա կը դառնայ օ՝ միայն ց-ի և վ-ի քով. ե և է կը դառնան է, իսկ ո, օ > օ. երբեմն ո կը՛լլայ իւ. ու > ու, ալ > է, ոյ > ու, իւ > ու. բաղաձայններուն երեք խումբերը կրած են ճիշտ այն փոփոխութիւնները, ինչ որ նախորդին մէջ. ատամնականի քով ր կը դառնայ օ. ուրիշ բաղաձայնի քով կը՛լլայ յ. խոնարհման մէջ ձայնաւորով սկսող բայերը կ'առնեն գ մասնիկը, իսկ բաղաձայնով սկսող բայերը կ'առնեն գու յետամասնիկը. գասիմ, ցեղիմ գու. նոյն ոճով յետադաս են պիսի մասնիկը և ոչ բացասականը. ուլիս բիլի, դեսի ուչ և ալն. անորոշ դերբայի վերջաւորութիւնն է ուօ. խօսուօ, եթօւօ և ալն:

9. Մալաթիոյ բարբառ

Քիչ ծանօթ է գիտութեան առջև. կը բռնէ խարբերդի և կիլիկիոյ մէջտեղը. ձայնական փոփոխութեանց մէջ կը նկատենք ե > ա, ի, ու > օ, ալ > է, ա, ոյ > օ, իւ > ի, օ ; բաղաձայններուն մէջ Մալաթիոյ բարբառը կը ներկայացնէ բոլորովին նոր զրութիւն մը, որ յատուկ է նաև Ռոտտութօին. գրաբարի երեք խումբերէն մնացած են հոս երկուքը. բայց գրաբարի թրթռուն ձայները կը դառնան թաւ, իսկ խուլները կ'ըլլան թրթռուն. Գերականութեան մէջ նկատելի չեն կարևոր փոփոխութիւններ:

10. Կիլիկիոյ բարբառ

Ասոր երեք ամենէն յայտնի ներկայացուցիչներն են Զէյթունի, Հաճինի և Մարաշի գաւառականները: Կը պարունակէ ա, տ, Է, ր, ի, օ, Էօ, ու, իւ ձայները: Բաղաձայնները ունին երեք խումբ Զէյթունի և Հաճինի մէջ. Բ, Բ', փ, Գ, Գ', ք և Էն. իսկ Մարաշ ունի միայն երկու խումբ, Բ, փ, Գ, ք և այլն: Անտիոքի մէջ կայ երկրարբաններու հարուստ խումբ մը, ինչ. Է, օր, Էյ, իյ, այ որ ուրիշ գաւառականներու մէջ կը պակսի:

Ձայնական փոփոխութեանց մէջ ամենէն նշանակելին է $w > o$ (շեշտի տակ). ուրիշ տեղ $w > a$ կամ m : Միւս ձայնափոխութիւններն են $Է, Է > Է, ի ; ի > ի$, բայց հետզհետէ բացուելով դարձած է Զթ. $Է, ր, Մրշ. w ; n > o$, իւ, Էօ ; $ու > o$, իւ; $իւ > ի$, ր, Է ; $ոյ > իւ$, ի ; $այ > ու$. Զթ. և Հճ. գրաբարի թրթռուն ձայները կը դարձնեն Բ', Գ', Դ', ձ', ք', իսկ խուլերը պարզ թրթռուն, թաւերը թաւ: Մարաշի մէջ թրթռուն և խուլ կը դառնան հաւասարապէս թրթռուն: Զթ. ր գրեթէ միշտ կը դառնայ յ.

Կիլիկիոյ բարբառը ձգտում ունի ոչ շեշտեալ ձայնաւորները վերածելու շեշտեալ ձայնաւորի աստիճանին. գնաց > Զթ. գօնօց քան > Զթ. քօնօն, ոսկի > Զթ. իսգի, Յիսուս Քրիստոս > Մրշ. իւսիւս ֆիւրիւսիւս, Այս օրէնքին հետեանքով է որ ր, մը յօդերը Մարաշի մէջ կը փոխուին ր, ի, ու, իւ և մը, մի, մու, միւ համաձայն բառին վերջին ձայնաւորին: Յոգնակիի մասնիկներն են իր, նիւ, նա, նը, դմբ: Սահմանականի նշանն է գօ, որ Զթ. բարբառին մէջ կը կրկնուի ձայնաւորով սկսող բայերու առջև. ինչ. գօ ձախիւմ, գօ գիլիբ: Մարաշ ունի երկու տեսակ ապառնի. մէկը պիտի մասնիկով, իսկ միւսը ուղի բայով կազմուած: Դերբայական մասնիկներն են իր (<եա) և մօն. վերջինը՝ որուն նախաւոր ձևն է ըստ օրինի ման, կը կցուի յն.— μένος մասնիկին և ասոր մէկ ձայնդարձն (Ablaut) է:

11. Սիւրիոյ բարբառ

Խիստ քիչ ծանօթացած բարբառ մ'է և շատ տարբեր գրական լեզուէն. կը պարունակէ ա, Է, ր, ի, օ, ու ձայնաւորները, տ, Էօ, իւ կը պակսին. կան նաև շատ երկրարբաններ. ինչ. այ, աք, աւ, Էյ, Է, ո : Ձայնական փոփոխութեանց մէջ նկատելի են $w > ու$, $Է > ի$, $ր > ա$, $ի > Էյ$, $ու > աւ$: Հոլովման մէջ ունի զ նախդիրը հայցականի համար և ի նախդիրը բացառականի և ներգոյականի

համար. ասոնք խորին հնութեան հետքեր են: Շատ ցանկալի էր ունենալ բարբառիս աւելի ընդարձակ ուսումնասիրութիւնը կամ գոնէ հաւատարիմ նմոշներ:

12. Արաբկիրի բարբառ

Ունի հոթը ձայնաւոր. ա, տ, ե, ը, ի, օ, ու. բաղաձայններն ունին երեք աստիճան. Բ, բ, փ եւն. Ասոնցմէ առաջին խումբը կը պակսի բարբառիս հարաւային մասին մէջ. Գլխաւոր յատկանիշներն են քերականութեան մէջ՝ օք մասնիկը՝ գործիականի համար. ձեռքով, խօսքով եւն. Սահմանականի մասնիկն է գա, գօ, գու, որ կը դրուի բայէն առաջ կամ յետոյ, իսկ ձայնաւորով սկսող բայերով վրայ կը կրկնուի. դրգոմ գու, գրոմ գու, (Արբ). գօ խէխդէս, գօ գերբամ, գուդ է գօ (Կիւր.), գա գերբամ, գա գուդէն (Կեսարիա), բերեմ գա (Տարէնտէ եւն):

Հետաքրքրական է Կեսարիոյ կրկնակի սեռական ձևը անորոշ զերբայի մէջ. ինչ. մընալույի, խօսելույի եւն:

13. Ակնայ բարբառ

Ունի 8 ձայնաւոր. ա, ե, ը, ի, օ, հօ, ու, իւ և երեք խումբ բաղաձայն՝ ինչպէս Արաբկիրի մէջ. ա ձայնը ռնգականի քով կ'ըլլայ օ, ու կը դառնայ իւ, ո, օ > հօ. ձայնաւորի յաջորդողն ձայնէն առաջ կը դրուի յ կիսաձայնը. ինչ. այն, մայն, գ'օյն: Երկրորդառանձնական մէջ ունինք այ > ա, ոյ > ու, իւ > ու: Բաղաձայններուն ձայնափոխութիւնը ճիշտ այնպէս է ինչպէս Զէյթունի եւն. Քերականութեան մէջ չկան նորութիւններ. սեռականի մասնիկն է իւ (կը ծագի ու-էն), սահմանականի մասնիկն է գիւ (որը կուգայ կու-էն). բայերու ե ածանցատառը ռնգականի քով կ'ըլլայ ի. գիւ խրգիւմ, գիւ խրգիւմք եւն: Անկատարին ու կատարեալին յոգնակի առաջին դէմքը ունի ա ձայնաւորը, մինչդեռ միւս բարբառները սովորաբար ունին ի. գիւդեանք, բ'հրանք: Ապառնի մասնիկն է դի, ձայնաւորի քով դ. դի բ'հրիւմ դիւդիւմ:

14. Սեբասիոյ բարբառ.

Ընդարձակ և մաքուր բարբառ մ'է, որ սակայն բոլորովին անծանօթ մնացած է գիտութեան առջև. ունի ե և ո ձայները և երեք աստիճանի բաղաձայններ. Բ, բ, փ եւն. Ասոնց փոփոխութիւնը ճիշտ այն ձևով է, ինչպէս Պարբերդ, Զէյթուն եւն. Այլ ձայնափոխութեանց և քերականութեան վրայ տեղեկութիւն չկայ:

15. Եւդոկիոյ բարբառ.

Շատ նման է Պօլսոյ բարբառին. կը պարունակէ ա, է, բ ի, օ, ուէ ձայնաւորները. բաղաձայնները շատ կրճատուած են, գրաբարի երեք աստիճանը հոս վերածուած է երկուքի. Թրթռուն և Թաւ. նոյն վիճակն ունին ասոնք նաև յաջորդ բարբառներուն մէջ:

Ձայնական փոփոխութեանց մէջ նկատելի են. ե>յէ միավանկ բառերու սկիզբը, այլուր է. ո>օ բառին սկիզբը, ուէ՝ բառի մէջ. այ>ա, ոյ>ու, իւ>ու: Գրաբարի Թրթռուն և խուլ խումբերը վերածուած են Թրթռունի. Թաւերը կը մնան անփոփոխ: Բ ձայնին քով գտնուած ատամնականները կ'իյնան՝ ք ձայնը փոխելով ո. սանիս>սառ. կսիւլ>կուլ: Խոնարհման մէջ բային ե ածանցատառը կը դառնայ ի. ներկան ունի երկու ձև. գը սիւիւ և գը սիւիւ գօր. վերջինը Պօլսոյ շարունակական ձևն է: Ապառնին Օրաուի մէջ կը կազմուի պարզ բ մասնիկով:

16. Զմիւռնիոյ բարբառ.

Ամենեկն ուսումնասիրուած չէ այս բարբառը. ինձ ծանօթ է միայն փոքրիկ բնագիր մը, որմէ կը տեսնուի թէ Զմիւռնիոյ բարբառը գրեթէ նոյն է Պօլսոյ հետ և կը տարբերի անկէ քանի մը ձևերով՝ որոնք նոյն են Եւդոկիոյ բարբառին հետ. ինչ. բայական ձևերու մէջ ե>ի փոփոխութիւնը:

17. Նիկումիդիոյ բարբառ.

Կը խօսուի բազմաթիւ հայ գիւղերու և երկու մեծ քաղաքի մէջ (Նիկումիդիա և Ատափաղար), ասոնց մէջէն դւուսումնասիրութեան առարկայ դարձած է Ասլանբէկի գաւառականը, որ ամէնէն բնորոշը կը թուի: Ունի 10 ձայնաւոր. ա, ո, ա՛ (նշագային ա), է, է՛, բ, ի, օ, Խօ, իւ. բաղաձայններն են բ, փ, ք, քթ, ձ, ց, ջ, չ, դ, ժ, ս, շ, յ, բ, ու, լ, լ (Թաւ լ), վ, ֆ, մ, ն, յս, դ, հ: Ըստ այսմ գրաբարի երեք խումբ բաղաձայնները վերածուած են երկուքի, Թրթռուն և խուլ խումբերը հաւասարապէս վերածուելով Թրթռուն: Ա ձայնաւորը երբեմն կը դառնայ ո, ռնգականի քով շատ որոշ ա՛. կ'ըլլայ Խօ՝ եթէ ռնգականին յաջորդէ բաղաձայն. կ'ըլլայ է՛ եթէ ռնգականին յաջորդէ ո, օ. կ'ըլլայ ա՛՝ եթէ ռնգականին յաջորդէ ք. Օր. անձրէ>ժօրդով, անուէ>եմիւե, մանք>մօրք. — Ե կ'ըլլայ սկիզբը է, այլուր է՛. ո>Խօ, իսկ ռնգականի քով ա. ու>իւ,

այ>ա (շեշտեալ), ե (անշեշտ), ոյ, իւ>իւ: Շատ հետաքրքիր է կրկնակ բաղաձայններուն փոփոխութիւնը, որ մինչև իսկ երկու տարբեր բառերու յարակցութեան մէջ կը զօրէ. բաղաձայնէ մը առաջ գտնուած պայթուցիկ տառերէն գ կը դառնայ յ ; ֆ, բ, փ, դ, ք կը ջնջուին, և իրենց տեղը կը նշանակուի միայն կոկորդի սեղմուածով մը: ջ, չ, ձ, ց կորսնցնելով իրենց աստիճանական մասը կըլլան ժ, ռ, զ, ւ. իսկ եթէ ասոնցմէ առաջ ց կայ, բոլորովին կը ջնջուի. Օր. վե'ս դըղա, դածգընալ, քեօգը, միւլ մը, ճիյ-դասը, գաւռ ֆիք, ջաժ մը (ճանճ մի) եւն:

Քերականութիւնը նման է Պօլսոյ. շարունակական ներկան կը կազմուի հայէ մասնիկով. գը սիրիմ, գը սիրիմ հայէ:

18. Պօլսոյ բարբառ.

Ունի 8 ձայնաւոր. ա, ե, բ, ի, օ, եօ, ու, իւ. երկբարբառներ չկան. բաղաձայններէն կը մնայ միայն երկու խումբ, Թըրթոուն և Թաւ. ասոնց փոփոխութիւնը նոյն է ինչ որ Եւդոկիոյ, Զմիւռնիոյ, Նիկոմիդիոյ բարբառներուն մէջ: Զայնական փոփոխութիւնները շատ հազուադիւս են. ձայնաւորները կը պահեն իրենց հնչումը. ա>ա, ե, ե>ե (ամէն տեղ), բ>բ եւն. երկբարբառները կը դառնան պարզ ձայնաւոր. այ>ա, եա>ե, իւ>ու, ոյ>ու. բառասկզբի դ կը դառնայ իւ.—հ ձայնը դ-էն առաջ կ'ըլլայ իւ. հող>խող. հաղորդ>խաղօր:

Քերականութեան մէջ նկատելի նորութիւններ չկան. ամէնէն կարևորն է ձայնաւորներու սղման կամ կրճատման կանոնի բացակայութիւնը հոլովման մէջ և հոլովման չափազանց կանոնաւորութիւնը. սիրդի, գիցիի, տուցի եւն:

Սոնարհման մէջ ձևացած են բազմաթիւ բաղադրեալ ժամանակներ՝ հետևողութեամբ թուրքերէնի. ստեղծուած է նոյնպէս ներկ. և անկ. շարունակական ձևեր. գը սիրեմ, գը սիրեմ գօր, գը սիրեյի, գը սիրեյի գօր:

19. Ռոսնոբօյի բարբառ.

Այս բարբառին վրայ տող մ'անգամ չկայ ուսումնասիրութեան և ոչ ալ որեւէ բնագիր մը: Շատ նման է Պօլսոյ բարբառին, բայց ձայնական դրութիւնը նոյն է Մալաթիոյ հետ. հոս ալ գրաբարի Թրթոուն խումբը վերածուած է Թաւի, իսկ խուլներու խումբը դարձած է Թրթոուն: Ուրիշ ձայնական և ձևական փոփոխութիւններ չկան. Պօլսոյ պէս մաքուր բարբառ մէ: միայն

թէ հոս բայերուն եւ ածանցականը կը դառնայ ի. անկ. և կատ. յոգ. ա. դէմքը կ'ըլլայ ա (գր սիրեանք, սիրեցանք). շարունակական ներկան ու անկատարը Պօլսոյ և Եւդոկիոյ նման կը կազմուի զօր մասնիկով. ապառնին կը շինուի բրդը, բրդը ձևով:

20. Խրիմի բարբառ.

Շատ կողմերով նման է Պօլսոյ բարբառին և կը բռնէ Պօլսոյ ու Կարնոյ բարբառներուն մէջտեղ. ձայնաւորներն ու բաղաձայնները բոլորովին նոյն են Պօլսոյ հետ. ր ձայնը կը հնչուի (նոր-նախիջկանի մէջ) շատ փափուկ, երեք>ժեք, իրեք>ժեք, իրեք>ժեք բառերուն մէջ արդէն բոլորովին դարձած է ծ, իսկ ր-ի քով ւ, ինչ. եքալ>եքալ, մաք>մադ եւն:

Հոլովմունքը և խոնարհումը Պօլսոյ պէս է. հոս ալ ձայնաւորներու սղման և ջնջման օրէնքը բոլորովին մոռցուած է. հայցականի կազմութիւնը միայն կը տարբերի և նոյն է Կարնոյ, Վանի, Երևանի ձևերուն հետ: Բայերուն մէջ ներկայի և անկատարի բունը կը շինուի գ (ձայնաւորի քով), գր (բաղաձայնի քով), քր (թաւ բաղաձայնի քով) մասնիկներով. ածանցատառ եր կը դառնայ ի՝ ինչպէս Ռոտոսթօ եւն: Անցեալ դերբայի վերջաւորութիւնն է իլ: Մնացեալը ամբողջապէս նոյն է Պօլսոյ հետ:

21. Աւսրօ-Հունգարիոյ բարբառ.

Ունի քանի մը ճիւղեր, որոնք են Լեհահայք, Հունգարահայք և Ռումանահայք, որոնք այս անուան տակ միացուցի՝ իրենց ունեցած շատ մը ընդհանուր գծերուն համար: Ասոնցմէ ինձ առանձնապէս ծանօթ է Սուչավայի բարբառը, զոր կ'ուզեմ ուրուագծել հոս: Այս բարբառն ունի 6 ձայնաւոր, ա, է, ր, ի, օ, ու. առատ են երկբարբառները. ինչ. աւ, իւ, օւ, էւ, իր. ասոնցմէ աւ, իւ, էւ կուգան գրաբարի աւ, էւ, իւ ձայներէն. Օր. ցաւ>ցաւ (կարգա ցա՛ւ), պաւ>բադիւ (կարգա բադի՛ւ), սեաւ>սեւ (կարգա սի՛ւ): Ե և իը կուգան գրաբարի Ե և ի ձայներէն. ինչ. մեք>մեք, սիւք>սիւք: Այս Ե ձևը նոյն է Վանի և Մուշի Ե ձայնին հետ:

Բաղաձայնները ունին երեք աստիճան. բ^բ, բ, փ եւն. ասոնց փոփոխութիւնը ճշտիւ նոյն է ինչպէս Զէյթուն, Արաբկիր, Ակն, Սեբաստիա եւն:

Հոլովման մէջ նկատելի են. յոգնակիի նշանը եր, ցեր, նաւ

ըստան (նոյնը և կարին). հայցականի նշանն է գ. գործիականի մասնիկն է ու <ով:

Խոնարհման մէջ հետաքրքիր են գլխահամանականի մասնիկը, բիդօր ապառնիի մասնիկը, որ Հունգարիոյ մէջ պարզապէս բի կըլլայ, Բայերուն և անհայտապէս հոս ալ դարձած է ի: Կատարեալը գրեթէ գործածութենէ բոլորովին ինկած է և փոխանակուած է՝ յարակատարով: Անկատարին երկրորդ դէմքին վերջաւորութիւնն է ս, որ յառաջացած է ներկային նմանողութեամբ. գր սիւրիլս, գուդիլս եւն: Անցեալ դերբայի վերջաւորութիւնն է իլ՝ ինչպէս Խրիմի բարբառին մէջ:

Գ. Ել-ի ճիւղ.

1. Մարաղայի բարբառ

Ել-ի ճիւղին գլխաւոր ներկայացուցիչն է. հարուստ է ձայնական դրութեամբ. կը պարունակէ՝

Ձայնաւորներ՝ ա, տ, է, ը, ը, ի, օ, օ, ու, իւ.

Երկբարբառներ՝ ըյ, ույ, ըէ, ուէ.

Բաղաձայններ՝ բ, պ, փ; գ, կ, ֆ; գ', կ', ֆ; դ, Տ, ք; ձ, ծ, ց; զ, ն, չ; զ, ժ, շ, ս; խ, դ, հ, ֆ; յ, ր, ու, լ, վ, լ, ֆ, մ, ն.

Ասոնց մէջէն ը ուս և ձայնն է. լ անգլ. w հնչիւնն է. ըյ, ույ, ըէ, ուէ արագ արտասանուած երկբարբառներ են. միւսները ծանօթ են արդէն:

Ձայնական փոփոխութեանց մէջ նկատելի են ա>ա, տ ; ե>յէ (միավանկներու սկիզբը), է (բազմավանկներու սկիզբը), իսկ բառի մէջ է, ըէ, ի; ի>ի, ըյ, ը; ս>վըյ (բառասկզբին), օ, օ, ըյ, ույ, ուէ (բառի մէջ). ու>ու, ույ, իւ ; այ>է ; իւ>իւ, ի ; ոյ>իւ, ույ. և ձայնը միշտ կը դառնայ իւ. բաղաձայններու երեք խումբերու փոփոխութիւնը ճիշտ ու ճիշտ նոյն է վանայ կամ Ղարաբաղի հետ:

Ամբողջ քերականութիւնը հիմնուած է ձայնական ներդաշնակութեան օրէնքներու վրայ. օրինակի համար՝ ը որոշեալ յօդը կըլլայ ա՝ եթէ բառին վերջավանկին ձայնաւորը ա կամ ու է, կըլլայ ու՝ եթէ այդ ձայնաւորը տ, է, իւ է եւ: Սեռականի նշանն է բ՝ եթէ վերջավանկին ձայնաւորն ըլլայ ա, ը, կըլլայ իւ՝ եթէ

նոյն ձայնաւորը իւ, եօ ըլլայ, ու՛ եթէ ու, օ ըլլայ, ի՛ եթէ ի ըլլայ են. նոյն իսկ էական բայը հպատակ է այս օրէնքին:

Յոգնակիին մասնիկներն են. իր (միավանկներու համար), նիր (ձայնաւորայանդ բառերու համար), քիր (բաղաձայնայանդ բաղմավանկ բառերու համար): Հոլովման մէջ ձայնաւորի սղում և անկում չկայ: Հոլովներն են ուղ. սեռ—տրակ. հայց. բաց. գործ. չկայ ներդ. հայցականի կազմութիւնը ումի ճիւղին պէս է:

Սահմանական ներկայի բունը կը կազմուի անորոշ ժամանակը խոնարհելով օժանդակ բային հետ. օր, կ'ուզեմ բայը. իւզելիմ, իւզելիս, իւզելի, իւզելիմ, իւզելիմ, իւզելիմ:

Անցեալը կազմուի համար նոյնին վրայ կ'աւելնայ եր՛ առանց որևէ փոփոխութեան. իւզելիմ եր, իւզելիս եր, իւզելեք են: Կատարեալը բոլորովին նոր ձև մ'ունի. իւզում, իւզիր, իւզից, իւզումն, իւզումք, իւզումք: Ապառնին ունի երկու ձև. կը և լու. կիւզիւմ և իւզօլու իմ են: Դերբայը կը վերջաւորի իր, ած, ըստ այսմ յարակատարը կ'ըլլայ իւզիր իմ, իւզած իմ, գերակատարը իւզիր իմ եր, իւզած իմ եր են:

2. Խոյի բարբառ

Կը բռնէ Վանի և Մարաղայի բարբառներուն մէջտեղը. ձայնական օրէնքները նման են Վանի բարբառին, իսկ քերականութիւնը նոյն է Մարաղայի հետ. ասկէ կը հետևի թէ բարբառս աւելի մաքուր է քան Մարաղայինը և հաւատարիմ հնին:

3. Արդուիցի բարբառ

Բոլորովին անձանօթ մնացած բարբառ մ'է. ձայնական կազմութեամբ բոլորովին նոյն է Թիֆլիսի բարբառին հետ. ունի թրթռուն, խուլ և թաւ բաղաձայններ, և ձայնը փոխուած չէ խ-ի. բացառականի մասնիկն է մեք, ինչպէս և Թիֆլիզ. ներդոյական ում հոս ալ գոյութիւն ունի: Բայը սակայն տարբեր է Թիֆլիզէն և կը մօտենայ Մարաղային. ում մասնիկը չկայ հոս. ներկան կը շինուի ել անորոշ գերբայով. օր. ըլնելի ե, փնսռելիս ե, չեմ կայի երբլի «չեմ կարող երթալ» են. ապառնին մասնիկն է կու, կու աւիմ, կու աւիմ են: Ե ածանցատառը կը փոխուի ի: